ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՌ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿԱԴԵՄԻԱՅԻ ՏԵՂԵԿԱԳԻՐ
ИЗВЕСТИЯ АКАДЕМИИ НАУК АРМЯНСКОЙ ССР
Բիոլ. և գյուղատնտ. գիտություններ IX, № 5, 1956 Биол. и сельхоз. науки

Խ. Ա. ԵՐԻՑՅԱՆ

Մի մայիսի 1-ին երկարատև հիվանդությունից հետո վախճանվեց ռեսպուբլիկայի հնագույն գիտնական՝ Հայկական ՍՍՌ Գիտությունների ակադեմիայի թղթակից-անդամ, Գյուղատնտեսական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Խորեն Ահարոնի Երիցյանը։

Խ. Ա. Երիցյանը ծնվել է 1882 թվականին Հայկական ՍՍՌ Ալավերդու շրջանի Սանահին գյուղում՝ գյուղացու ընտանիքում։ Նա բարձրագույն մասնագիտական կրթություն ստացել է Գերմանիայում։ 1906—1909 թվականներին սովորել է Լայպցիգի համալսարանի Գյուղատնտեսական ֆակուլտետում։

Համալսարանն ավարտելուց հետո վերադառնում է Անդրկովկաս, որտեղ մինչև Սովետական իշխանության հաստատումը աշխատում է զանազան շրջաններում агрономի պաշտոնով։

Հայաստանում Սովետական իշխանության հաստատման նախօրյակին Խ. Ա. Երիցյանը Երևանում վարում էր Գյուղատնտեսության և Գեոտական գույքերի Գլխավոր վարչության հողագործության բաժնի վարիչի պաշտոնը, որը շարունակեց նա Սովետական իշխանության հաստատումից հետո ևս մինչև 1923 թվականը։

1923 թվականին նա հրավիրվում է Երևանի պետական համալսարան՝ գյուղատնտեսական ֆակուլտետի անասնաբուծության ամբիոնի վարիչը պաշտոնով։ Գեոտական համալսարանում դասախոսելիս նա կարճ ժամանակում ցույց է տալիս իր մանկավարժական ընդունակությունները և վայելում իր կոլեգաների և ուսանողության համակրանքը։ Նրա դասախոսությունները՝ հագեցված գիտական տվյալներով և պրակտիկայից վերցված օրինակներով, մեծ հետաքրքրությամբ էին լսվում ուսանողության կողմից։

Մանկավարժական աշխատանքին զուգընթաց նա ծավալում է գիտական աշխատանք անասնաբուծության բնագավառում։ Ամենայն իրավամբ կարելի է ասել, որ Սովետական Հայաստանում անասնաբուծության գծով առաջին գիտական աշխատանքը կատարել է Խ. Ա. Երիցյանը։

Նա իր գիտական աշխատանքը տարել է մեր անասնաբուծության ամենից ավելի հրատապ, ակտուալ հարցերի ուսումնասիրման ուղղությամբ, ուշադրություն արել է հատկապես մատղաշների աճեցման, անասունների արոտային պահվածքի ռացիոնալացման արոտային սննդի նորմավորման, կերերի նախապատրաստման մեթոդների մշակման և այլ ակտուալ հարցերի լուծման վրա։

Դեռևս 1930 թվականին, նա առաջինը, առաջ քաշեց տեղական հորթերին մորից անջատ աճեցնելու հարցը, որը սակայն հակառակ նրա ջանքերին, պաշտոնապես լուծվեց միայն շատ ավելի ուշ։ Նա իր աշխատակիցների հետ միասին արտադրության պայմաններում մշակեց տեղական հորթերի կաթնային կերակրման սխեմաներ և ուսումնասիրեց տեղական հորթերի աճն ու զարգացումը լեռնային արոտային պայմաններում։

Խ. Ա. Երիցյանը օրիգինալ մտածողության տեր մարդ էր։ Գիտական հարցերը մշակելիս նա չէր գնում արգեն հայտնի ուղիներով, այլ միշտ ձգտում էր նոր տեսանկյունով մոտենալ հարցերին, միշտ կապելով պրակտիկայի հետ։ Դրա փայլուն ապացույցը հանդիսացավ նրա մշակած նոր արոտավայրում անասունների արածած կանաչ մասսայի քանակի հաշվառման մեթոդը, որը մեծ հետաքրքրություն առաջացրեց ոչ միայն սովետական, այլև արտասահմանյան գիտնականների մեջ։ Նրա այդ նոր մեթոդը, որը ամենից ճիշտն է եղած մեթոդներից, հնարավորություն է տալիս ավելի մեծ ճշտությամբ նորմավորել կենդանիների արոտային կերակրումը։ Նա մինչև իր կյանքի վերջին օրերը աշխատում էր այդ մեթոդի կատարելագործման և ուսումնասիրման ուղղությամբ։ Խորեն Ահարոնովիչը առաջինն էր ռեսպուբլիկայում, որ գիտական աշխատանքը կազմակերպեց կոլտնտեսության արտադրության բազայի վրա։

Խ. Ա. Երիցյանը հանդիսանում է մեր ռեսպուբլիկայում գյուղատնտեսական գրականության հրատարակության գործի հիմնադիրը։

Մի շարք տարիներ (1924—1928) աշխատելով Հայաստանի Կոմկուսի Կենտկոմի Ագիտ-պրոպ բաժնին կից ագրոպրոպագանդայի հանձնաժողովում որպես պատասխանատու քարտուղարի պաշտոնով, նա մեծ աշխատանք տարավ գյուղատնտեսության բանավոր և գրավոր պրոպագանդայի ուղղությամբ։ Նրա հեղինակությամբ ու խմբագրությամբ այդ շրջանում լույս ընծայվեց 25 անուն գիտա-հանրամատչելի բրոշյուր՝ գյուղատնտեսության տարբեր հարցերի շուրջը։ Նա միաժամանակ ակտիվ աշխատակցում էր «Մաճկալ» գյուղատնտեսական թերթին։

Նրա գրած բրոշյուրներն ու ձեռնարկները խոշոր դեր են կատարել մեր գյուղատնտեսության մասսայական կադրերի պատրաստման գործում։

Պրոֆ. Երիցյանը ակտիվ հասարակական գործիչ էր։ Սկսած Հայաստանում Սովետական իշխանության հաստատման առաջին օրերից նա խոշոր հասարակական աշխատանք է կատարել գյուղատնտեսության բնագավառում և այլ հասարակական կազմակերպություններում։

Նա մի շարք տարիներ (1927—1934) ընտրվել է Հայաստանի Կենտրոնական Գործադիր Կոմիտեի անդամ։

Պարտիան և կառավարությունը բարձր են գնահատել պրոֆ. Խ. Ա. Երիցյանի մատուցած ծառայությունները մեր սոցիալիստական գյուղատնտեսությանը և նրան պարգևատրել են Աշխատանքային Կարմիր Դրոշի շքանշանով և պատվոգրերով։

Խորեն Ահարոնովիչը մեծ հարգանք էր վայելում ոչ միայն իր կոլեգաների և աշակերտների շրջանում, այլև կոլտնտեսային լայն մասսաների մեջ։

Հանձին պրոֆ. Երիցյանի մենք կորցրեցինք մեծ գիտնականի, ազնիվ ու հայրենասեր քաղաքացու, հիանալի ընկերոջ և ուսուցչի։ Նրա պայծառ հիշատակը երկար ժամանակ վառ կմնա նրա ընկերների ու աշակերտների սրտերում։